bE-Open
Բաց տեղական կառավարում
Ինտերակտիվ գործիք

The Congress
Le Congrès

COUNCIL OF EUROPE
CONSEIL DE L'EUROPE

Ի՞նչ է bE-Open-ը

www.coe.int/congress/beopen

bE-Open առցանց գործիքը նպատակ ունի աջակցել տեղական և տարածքային կառավարման բոլոր դերակատարներին՝ տեղական ժողովրդավարության որակը բարելավելու նրանց ջանքերում՝ տրամադրելով էթիկայի, հաշվետվողականության, թափանցիկության և քաղաքացիների մասնակցության ուղեցույցներ:
Տեղական իշխանությունները կարևոր դեր են խաղում քաղաքացիների վստահության ձևավորման և մասնակցային որոշումների կայացման գործում, հատկապես՝ հանրային էթիկային և հաշվետվողականությանը նպաստող ուժեղ ինստիտուցիոնալ կառույցների բացակայության դեպքում: Առանց նրանց համաձայնեցված գործողությունների՝ կոռուպցիան և պաշտոնեական դիրքի չարաշահումը կարող են լայն տարածում գտնել՝ խարխլելով խաղաղ և բարեկեցիկ հասարակության հիմքերը: Այսպիսով, տեղական ընտրված ներկայացուցիչների և նրանց վարչակազմերի բարեվարքությունը և թափանցիկ ու հաշվետու կերպով գործելու նրանց կարողությունը կարևոր են քաղաքացիներին արդար ծառայությունների մատուցման համար:

Ինչպե՞ս է այն աշխատում

bE-Open առցանց գործիքն արագ և հեշտ մատուցում է Հայաստանում, Վրաստանում, Մոլդովայի Հանրապետությունում և Ուկրաինայում ներպետական օրենսդրությունում, նախադեպային իրավունքում ներառված համապատասխան տեղեկատվություն, ինչպես նաև ուղեցույցներ, լավագույն փորձի օրինակներ, միջազգային ստանդարտներ ընտրված չորս թեմաներով՝ Հանրային էթիկա և հաշվետվողականություն, Կոռուպցիոն ռիսկեր, Թափանցիկություն և Քաղաքացիների մասնակցություն:

Ո՞ւմ է այն վերաբերում

Տեղական և տարածքային կառավարման բոլոր դերակատարներին՝ իրենց գյուղերում, քաղաքներում և մարզերում տեղական ժողովրդավարության որակը բարելավելու ջանքերում: Այն նաև օգտակար կարող է լինել էթիկայի, հաշվետվողականության, թափանցիկության և քաղաքացիների մասնակցության թեմաներով հետաքրքրվող քաղաքացիների համար: **bE-Open** առցանց գործիքը հասանելի է անգլերենով և նշված երկրների լեզուներով:

Թափանցիկության և քաղաքացիների մասնակցության ձեռնարկներ

Հայաստան	Վրաստան	Մոլդովայի Հանրապետություն	Ուկրաինա
HYE - ENG	KAT - ENG	RON - ENG	UKR - ENG

Լրացուցիչ ռեսուրսներ

- Վարքագծի եվրոպական կանոնակարգ՝ տեղական և տարածքային կառավարման մարմիններում ներգրավված բոլոր անձանց համար
- Կոռուպցիայի կանխարգելում և հանրային էթիկայի խթանում

bE-Open առցանց գործիքը մշակվել է Եվրոպայի խորհրդի տեղական և տարածքային իշխանությունների կոնգրեսի կողմից՝ հանրային էթիկայի, կոռուպցիայի կանխարգելման իր առաջնահերթություններին, ինչպես նաև տեղական մակարդակում մարդու իրավունքների մասին իրազեկվածության բարձրացման շարունակական աշխատանքին համապատասխան: Այն խթանում է թափանցիկության, հաշվետվողականության և քաղաքացիների մասնակցության վրա հիմնված ժողովրդավարական ինստիտուտների պատշաճ գործունեությունը՝ այդպիսով նպատակ ունենալով վերականգնել քաղաքացիների վստահությունը պետական իշխանությունների նկատմամբ: